Հաշվետվություն

2022 թվականի հունիսի 28-ից հուլիսի 1-ը Ռուսաստանի Դաշնություն (Սանկտ Պետերբուրգ) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**
   Սուրեն Թովմասյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   Կադաստրի կոմիտեի ղեկավար

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Ռուսաստանի Դաշնություն, Սանկտ Պետերբուրգ, հունիսի 28-ից հուլիսի 1-ը

4. **Հրավիրող կողմը.**
   ՌԴ պետական գրանցման, կադաստրի և քարտեզագրության դաշնային ծառայություն (Росреестр)

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   - Մասնակցություն Սանկտ Պետերբուրգում կայացած Պետերբուրգյան X-րդ միջազգային իրավական համաժողովի շրջանակներում անցկացվող պանելային քննարկումներին՝ «Օրենսդրությունը հողի և անշարժ գույքի ոլորտում» թեմայով,
   - Շրջայց Պետրոգրադի շրջանի պետական և քաղաքային ծառայությունների մատուցման բազմաֆունկցիոնալ կենտրոնի 1-ին բաժնում:

Քննարկված թեմաները.

Քննարկվեցին օրակարգով նախատեսված հետևյալ հարցերը.

- իրավական համակարգերի փոխգործակցության բարելավումը և իրավական խնդիրների լուծման ընդհանուր մոտեցումների մշակումը ժամանակակից աշխարհում,
- հողի և անշարժ գույքի ոլորտում օրենսդրության կատարելագործման հեռանկարները,
- տարածքային կառավարման արդյունավետության բարձրացման իրավական ասպեկտները,
- Պետական և քաղաքային ծառայությունների մատուցման բազմաֆունկցիոնալ կենտրոնի՝ Ռոսռեեստրի մատուցած ծառայությունների

շրջանակում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությանն անցնելու ուղղությամբ տարվող աշխատանքները,

- էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության անցնելու ուղղությամբ տարվող աշխատանքները:

6. Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր.

Վերոնշյալ միջոցառմանը Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեն ներկայացրել է կոմիտեի ղեկավար Սուրեն Թովմասյանը:

Պանելային քննարկումներին մասնակցել են ՌԴ պետական գրանցման, կադաստրի և քարտեզագրության դաշնային ծառայության ղեկավարը, ՌԴ քաղաքաշինության նախարարության ներկայացուցիչը, Պետդումայի պատգամավորներ, ինչպես նաև գործարար և մասնագիտական համայնքների ներկայացուցիչները:

Քննարկվել են հողի և անշարժ գույքի ոլորտում քաղաքացիների և գործարար միջավայրի իրավունքները երաշխավորող միջոցառումները, քննարկվող ոլորտում հասարակության կարիքների բավարարմանը միտված օրենքները, ներդրումային-շինարարական շրջանառության կրճատման և տարածքների համաչափ զարգացման ապահովմամբ՝ շինարարական ներդրումների համար անարգել միջավայր ստեղծելու և ոլորտի այլ կարևոր հարցեր:

Սուրեն Թովմասյանը ևս հանդես է եկել զեկույցով՝ ներկայացնելով հողի և անշարժ գույքի ոլորտում Կադաստրի կոմիտեի նախաձեռնած հիմնարար օրենսդրական բարեփոխումները, որոնք միտված են ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշմամբ հաստատված N 1 հավելվածով սահմանված կոմիտեի ստանձնած պարտավորությունների կատարմանը:

Պետրոգրադի շրջանի պետական և քաղաքային ծառայությունների մատուցման բազմաֆունկցիոնալ կենտրոնի 1-ին բաժնում տեղի ունեցած հանդիպմանը մասնակցել են ՌԴ պետական գրանցման, կադաստրի և քարտեզագրության դաշնային ծառայության (Росреестр) ներկայացուցիչները՝ ծառայության ղեկավարի գլխավորությամբ, ինչպես նաև «Պետական և քաղաքային ծառայությունների մատուցման բազմաֆունկցիոնալ կենտրոն» Սանկտ Պետերբուրգի պետական հիմնարկի տնօրենը, տեղակալները և Պետրոգրադի շրջանի պետական և քաղաքային ծառայությունների մատուցման բազմաֆունկցիոնալ կենտրոնի ղեկավարը:

Այցելության ընթացքում կենտրոնի ղեկավարը ներկաներին ծանոթացրել է իրավունքների գրանցման ամբողջական գործընթացին, ստորաբաժանման կառուցվածքին, ինչպես նաև Ռոսռեեստրի էլեկտրոնային համակարգին:

Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպման ընթացքում որոշումներ կամ այլ հարակից փաստաթղթեր չեն կազմվել և չեն ստորագրվել:

7. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները.

Վերոնշյալ հանդիպումներն ընթացել են բովանդակային քննարկումների ձևաչափով: Մասնավորապես՝ ոլորտի մասով տեղի է ունեցել մտքերի փոխանակում, որի ընթացքում մասնակիցները հատկապես կարևորել են գրանցման մեթոդաբանության պարզեցման համար կարևորագույն գործիք հանդիսացող էլեկտրոնային համակարգի կիրառումը:

8. Ստորագրությունը, ամսաթիվը:

Սուրեն Թովմասյան 06.07.2022 թ.